

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Պարզադիր ժամկետային զինծառայող Անդրանիկ Սարգսի Սարգսյանի մահվան հանգամանքների և դրանց քննության վերաբերյալ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ ՍԱՐԳՍԻ

Ձորակոչվել է 2009թ. նոյեմբերին Մասիսի զինկոմիսարիատից
Ծառայության է անցել ՀՀ ՊՆ թիվ 12798 զորամաս /Կուրաթլու/

1. Մահվան պատճառների պաշտոնական վարկածը.

ՀՀ ՊՆ թիվ 12798 զորամասի 3-րդ մոտոհրաձգային վաշտի 3-րդ դասակի ավագ հրաձիգ, շարքային Անդրանիկ Սարգսի Սարգսյանը 2010թ. փետրվարի 1-ին ժամը 11-ի սահմաններում նշված զորամասից նույն զորամասի բուժ. ծառայության-բուժ.կետի պետ, ավագ լեյտենանտ Ա. դասի Ավայանի ուղեկցությամբ. զորամասին պատկանող <<ՈւԱԶ>> մակնիշի ՊՆ0958 պետհամարնիշի ավտոմեքենայով երեք այլ զինծառայողների հետ զորամասի ուղեգրով հետազոտման նպատակով ուղարկվել է Ջանգեզուրի կայազորային զինվորական հոսպիտալ (ՀՀ ՊՆ թիվ 70011զորամաս), սակայն ճանապարհին մահացել է և նույն օրը ժամը 12:10-ի սահմաններում արդեն մահացած վիճակում տեղափոխվել <<Գորիսի բժշկական կենտրոն>> ՓԲԸ:

Դեպքի առթիվ ՀՀ ՊՆ ՔԾ 9-րդ կայազորային քննչական բաժնում նախապատրաստվել են նյութեր, որոնցով հետազայում կայացվել է որոշում քրեական գործի հարուցումը մերժելու մասին:

2. Մահվան պատճառների դիմումատուի վարկածը.

Ըստ Անդրանիկ Սարգսյանի հոր՝ Սարգիս Սարգսյանի, իր տղայի մահը առաջացել է զորամասի բուժծառայության պետ Ա. Ավայանի անգործության հետևանքով: Բացի այդ, Ս. Սարգսյանի պնդմամբ, իր տղայի դիակի վրա եղած խորը վերքերը վկայում են, որ դրանք առաջացել են կենդանության օրոք, և չի բացառվում որ մահվան ու առաջացած վնասվածքների միջև առկա լինի պատճառահետևանքային կապ:

3. Գործի քննությունը ներկայումս հետևյալ փուլում է.

Նախապատրաստված նյութերի հիման վրա քննիչի կողմից կայացվել է որոշում՝ քրեական գործի հարուցումը մերժելու մասին, հանցակազմի բացակայության պատճառով:

4. Գործի քննության /հետաքննության, նախաքննության, դատաքննության և այլն/ ընթացքում տեղ գտած թերացումները, ըստ դիմումատուի.

- բուժճառայության պետ Ա. Ավայանը իր բացատրությունում նշում է, որ ինքը սխալ օրոշում է իրականացրել, մինչդեռ նախաքննության մարմինը այդ հարցին չի անդրադառնում,
- Ա. Սարգսյանի դիակի վրա առկա են խորը վերքեր, սակայն փորձագետները հիմնավորում են թե դրանք առաջացել են մեքենայում օգնություն ցույց տալու ընթացքում,
- Բժիշկ Ա. Ավայանը փոխարեն առաջին բուժ. օգնություն ցույց տալու, հանգուցյալի եղբորը ասել է, <<նստի՛ր եղբորդ կողքը որպեսզի հարկ եղած դեպքում նրան հանքային ջուր կամ թան փաս>>,
- Բժիշկ Ավայանի անգործությունն ու անփութությունը հիմնավորվում է նաև վերջինիս եղբոր, նույն գործառնության գինձառայող Պարույր Ավայանի կողմից տրված բացատրություններով,
- նյութերում առաջացած մահվան տարբեր ժամանակահատվածներ են նշված, որոնք դիմումատուի մոտ առաջացնում է կասկածներ:

5. Դիմումատուի առաջարկները քննության բավարար արդյունքներ ստանալու համար.


Վերացնել գործի հարուցումը մերժելու մասին որոշումը, հարուցել քր. գործ և կատարել նախաքննություն,
 Հիմք ընդունելով նաև Ա. Ավայանի տված բացատրությունները, նրան առաջադրել մեղադրանք պաշտոնական անփութության մեղադրանքով, որն առաջացրել է ծանր հետևանքներ:

6. Մարդու իրավունքների պաշտպանի առաջարկները ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներին

- Հարցապնդմամբ դիմել ՀՀ զինվորական դատախազին՝ նոր քր. գործ հարուցելու և նախաքննություն իրականացնելու նպատակով:
- Հարցապնդմամբ դիմել ՀՀ ՊՆ քննչական ծառայության պետին՝ քննության առարկա դարձնել բուժճառայության պետ Ա. Ավայանի գործողությունների /անգործության/ իրավաչափությունը և արարքին տալ իրավական գնահատական:

Ծանոթագրություն:Սույն տեղեկանքում ներկայացված վարկածները, ենթադրությունները, եզրակացությունները, պնդումներն ու առաջարկությունները, բացառությամբ սույն տեղեկանքի 6-րդ կետում ներկայացվածների, չեն կարող որևէ դեպքում ներկայացվել որպես ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի գնահատականներ կամ դիրքորոշումներ:

ՀՀ ՄԱՐԳՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ՝
 ԿԱՐԵՆ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ



ԴԻՄՈՒՄԱՏՈՒ՝
 ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍՅԱՆ
 (Անդրանիկ Սարգսյանի հայրը)

